

Գ Ն Մ Ա Ն Բ

Էրիզան 10 օրը անգամ մը կը
հրատարակուի :
Տարեկան գինն է 1 1/2 մեծիս
Մէկ Թերթը 30 փարայ .
Բաժանորդագրութիւնը տար-
ւոյն սկիզբէն է .
Դուրս երթալիքներուն ծախ-
սիսը անուոյն վրայ է :
Անվճար նամակը կը մերժուի-
Հանդիսիս վերաբերեալ նա-
մակ կամ գրութիւն, պէտք է
ուղղել առ Խմբագիր :



ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

Կ. Պօլիս, Արամեան տպարան.
Ատարագար, Պ. Սալահորեան.
Սամսոն Օհանէսէս Եղիսէրեան.
Տրապիզոն, Հ. Գ. Սարգեան.
Էրիզա, Պ. Սիմօն Մ. Խոշա-
տուրեան .
Նիկովիա, Ռուբէն Կ. Դա-
պառագայեան.
Զմիւռնիոյ, Յ. Տէտէեան .
Կարին, Կ Պատ. Զաքարեան .
Վան, Պ. Գրիգոր Դասեան
Մուշ, Աւետիս Փոթիկեան.

Է Ր Ի Զ Ա

Հ Ա Ն Դ Է Ս Տ Ա Ս Ն Օ Ր Ե Ա Յ

Ա. Տարի 1868

Երե կ'ուզես գիտնալ րե աշխարհիս ազգաց մեջեւն հրե և ամենեւն շու-
սանորեայն ու հարուստ. հարցուր րե հր ազգն աւելի ընթերցաւոր ե
կամ հր ազգն աւելի քուղր կը գործածե :

Թիւ 14 Ապրիլ 27

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամնադին կամ Տիրապալաութիւն . — Էրիզական Նամականի .

ԱՄՆԱԴԻՆ

ԿԱՄ

Տ Ի Ր Ա Ս Պ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա.

1866 Թուականին Սեպտեմբեր ամսոյն վերջերը
էրեք բարեկամներ Զարմայր , Աշոտ ու ես , բաղա-
քին աղմկալի և ստրուկ կեանքէն ձանձրացած և մա-
քուրօղ մը ծծելու մտօք ժամագիր եղանք հետեւեալ
առտու կլիւրակէ որսի երթալ և գէթ բանի մը ժամ
բնութեան զեղումեանցը վրայ զմայլել ու ազատու-

ծիւնը փնտռել , այն կատարեալ ազատութիւնը ,
որ լեռներու սարերը , ընդարձակ և միայնիկ դաշ-
տերու , անապատներու և ծովուն անհունութեանը
մէջ միայն կը գտնուի : Ուստի այն օրը բաւական
որս ընելէն յետոյ Կէօզմէփէն գացինք :

Զմիւռնիոյ Արևմտեան Հարաւային կողմը ծովե-
զերեայ բուսաւետ բլրակի մը վրայ կառուցուած
բարաշէն տուներ կը գտնուին , որոնք դալարագեղ
պարտէզներով շրջապատուած են : Ժայռերէ բղխած
վճիտ ջուրը նոսր արուակներ կը ձևացնեն և որոնք
սոյն ծառաստաններուն մէջէն կը սահին , կանցնին
կերթան ու ետքը ստորերկեայ ճամբաներով ծովը
կը թափին : Մանաւանդ աշնան եղանակին սոյն վայ-
րը բանաստեղծական չքնաղ տեսարան մը կրնձայի
մարդկային աչերոյ : Գանի մը համեստ և քիչ շատ
ճարտար ընթանիքներ Իզմիրէն գալով՝ ամառնա-
յին տօնակէզ եղանակը այս մենաստաններու մէջ
կանցնէն և որոնց կլիման խիստ զով է :

Սոյն չնաշխարհիկ վայրն է Կէօզմէփէն :

Այս ընտանիքներուն վարած կեանքը խորհրդաւոր է : Ամենքնին ալ զրեմէ եղբայրական սիրով կը կենակցին , գիշեր ցերեկ իրարու հետ կը տեսնուին կը զուարճանան , իսկ սիրահարները հոս աշխարհ կը մոռնան և քաղցր երեւակայութիւններ իրենց միտքը կը գրաւեն և սիրտը կը յուզեն : Հուսկ ուրեմն բնութիւն , սրտի անկեղծութիւն , մարդկային ազնիւ բարք և վարք , այս երջանիկ ափսոսանքներուն մէջ կարծես թէ սիրալիր համբոյրներ կուտան իրարու և անանկ զգացումներ կը ներշնչեն որ մարդկային խորհուրդները կը ճոխանան , անմեղ և ազնիւ կիրքերը կը յուզեն , իսկ բանաստեղծ մը կսկսի խորհիլ և միտքը իմացականութեան ձևերով մինչև անմահութիւն , կը սաւառնի կերթայ ... :

Ժամը հինգն է : Իրիկունը կը մերձենայ , բայց արեգակը իւր շլացուցիչ և ջերմ ճառագայթները ամեն տեղ սփռած կը կենայ : Ծովը իւր առջի օրուան հանած ալեկոծութեան վրայ զղջացած կը թուի և հանդարտ է , սակայն բարակ հով մը ալիքներու թեթև փրփուրներ կը մղէ , որպէս զի գալով՝ աւազուտ եզերքը , համբուրներ տան և փշուրին : Քանի մը կիներ և վառվռուն օրիորդներ ծովեզերքին վրայ կը շրջագային , ոմանք իրենց ամուսինը կամ եղբայրը և քիչերը իրենց սիրահարը անհամբեր սպասելով : Իսկ մեք տեսնելով որ դեռ շատ ժամանակ կար կերակուրի ուռենիի մը ստուերին ներքև նստած զիրար կը նկատենք :

Զարմայր մեյամաղձոտ բնաւորութիւն մը ունէր , իւր սիրունիին մահուանէն ի վեր ուրախութիւն չէր զգացած , թէպէտև ի բնէ գեղանի , այլնիհար և թակակոյն դէմք մը ունէր : զունատ շուրթերովը կարծես թէ մարդկութիւնը կը հեզնէր աշխարհս կը ծաղրեր : Միշտ դէպ ի ծով կը նայէր ակնդէտ իւր տրտմութիւնը փարատելու համար : Իւր միտքը նախապաշարունակներով հոգնած չէր և սիրտը վաթկար և հոռի կիրքերով չէր ընկճուած , սակայն ծուռ դատողութեամբ կրօնքը և մարդկային բարքը միշտ կարհամարհէր : Իսկ Աշոտ սկզբունքի և ազատ համոզումի տէր անձ մ'էր , ընտանիքի ու ազգութեան և անոնցմէ նախաանձուր մարդկութեան

զարգացմանը համար պատրաստ էր կեանքը անզամ զոհելու և Զարմայրի հալամաշ մտածմունքներէ մերթ զուարճալի և մերթ տրտմալի խօսակցութեամբ զգուշացնել կը բաղձար :

Չուրջ հինգ տարի առաջ Հայաստանի կողմերը ուղևորութիւն մը ըրած ըլլալուն՝ մենք ալ սկսանք այն մեր մեծ և համեստ ընտանիքին , վշտակիր Հայութեան հայրենեացը վրայ զանազան տեղեկութիւններ ուզել իրմէն :

— Ո՛հ , հառաչեց իսկոյն , այդ անցքերուն դառն յիշատակը միտքս մի՛ բերեք , սրտիս ցաւերը և կսկիծները մի՛ նորոգեք :

Իսկ մեք վերստին կատիպէինք զինքը խօսելու :

— Ի՛նչ խօսիմ ուրեմն ըսաւ արդէն Աշոտ : Հայաստանի որ մէկ թշուառութիւնը յիշեմ հոս : Անոր վիճակը ինչպէս նկարագրեմ : Որ կողմը դառնաս կրօնամոլութիւն , որ կողմը դառնաս Հայերու ոտից առջին գերութեան հրացայտ ուռմբերը և ամուր շղթաները բռնութեան զործած գեղծումները կը տեսնես : Անհնար է որ մարդկային սիրտ մը այս աղիողորմ կացութեան առջև դիմանայ : Բայց ինչ կըսեմ տարագիր Հայը նաև այս կողմերը մտաւորային և բարոյական զարգացման նկատմամբ յետին ազգերէ մին կը համարուի : Չես նկատեր որ ամբաստանութիւնը և մոլորութիւնը անոր մէջ արմատացած են և անոր չորս դին ազնուապետական դրութիւնը , զրպարտութիւնը , մատնութիւնը և անօրէնութիւնը պատած են :

Ատոր քիչ շատ մենք ալ ականատես ենք , վասնորոյ կը բաղձանք աւելի մեր Հայրենեաց վրայ տեղեկութիւններ ստանալ , յարեց Զարմայր միտ դնելու հետաքրքրութիւն յայտնելով :

— Բարի . այն երկիրը որ այնչափ հայրենասէրներ ծնած է , այն երկիրը որ անոնց արեամբը և մայրերու արօտսւրբովը թրջուած է , այն երկիրը որ 1389 թուականին ռսերիմ և անհեղ թշնամիի մը դէմ հայրենիք , կրօնք և պատիւ պաշտպանելու համար արիաբար կռուող և յուսաբեկ՝ անոր ձեռքը չիյնալու համար իւր նորատի , փոքր և սիրասուն որդին սպաննող և յետոյ ինքնամահ այս աշխարհէ

եյնելով նահատակուող Կարինէյին, այն դիւցազն Արմենուհիին արեւ պարզեց, այն այսօր զլիսովին զուրկ է անանկ կորովի և հայրենասէր զաւկըներէ։ Այն, արդի հայերը և ոչ իսկ իրենց գոյութիւնը կարող են զգալու։ ալ աւանդապահ չեն ու չ'ունին ազգային գաստիարակութիւն, որպէս զի իրենց յոռի զգացումները փոխուին, միտքերնին հարըստանայ, ասանկով իմանան նաև իրենց գոյութիւնը և բարւոք վայելեն զայն։

Արդ հազիւ երկու կամ երեք քաղաք կը գտնուին որ սակաւ ինչ լուսաւորութեան ճաշակը առած են, իսկ միւս քաղաքներուն բնակչացը վրայ իրենց կոշտ լեզուէն և բնաւորութենէն զատ ուրիշ բան մը չեւեար։ Ինչ և իցէ խօսքս չերկարեմ, վշտահար սրտովս ձեզ յիշեցնելով նաև որ ինչպէս մեր՝ այդ կողմերուն ալ աւելի, լուսաւորութիւնը դարերու կարօտ է։

Ջարմայր այս խօսքերը, իւր բարեկամին վհատութիւնն տեսնելով՝ հիմայ ինքը սիրտ առաւ և

— Է՛հ, ըսաւ, դու որ ազգի որ անհատի համար միշտ անցեալին պատմութենէն դաս առնել, ապագային համար կանխատես ըլլալ, դու որ միշտ փոփոխիկի ատեն ալեւաց դեմ պնդի ժայռի մը պէս անյողգողդ կամքով մը անվկանդ և անվժար մնալ կը քարոզես, զոնէ չ'ես վարանիր վհատուիլ։

— Իրաւունք ունիս, կրկնեց անդէն Աշոտ, բայց զիտես, ինչ որ ըլլայ զգայուն սիրտ մը հայրենեաց կրած տառապանաց առջև անհնար է որ չտրտմի։ Անհնար է որ իւր նախաճարգ երկրին մէջ փոխանակ իրաւունքի ազատքեան, զօրագունին կողմանէ գործելու ազատութիւնը միայն, և ընկերային մեծ բազմութիւն մը անշարժ վիճակի մէջ տեսնելով չը վհատի և լուսահատութեան հառաչ մը, ձայն մը, բառ մը չ'արձակէ

Պահ մը լռելէն յետոյ գոչեց.

— Բայց չ'է կը սխալիմ, Ջարմայր, անկեղծօրէն կը խօսիմ և հաւաստի եղիր որ ամբողջ հայութիւնը այս կորստեան վիճէն հեռացնելու, անոր տգիտութեան խաւարը փարատելու, ապականութիւնը հալածական վանելու և ճշմարիտ քաղաքակրթութեան

շաւղին մէջ մեծ քայլ մը ընել փալու համար լոյս մը պէտք է, լոյս մը որ չէ թէ եկեղեցւոյն կանթեղնութեն և մոմերէն, այլ դարձեալ հոն գտնուած Աւետարանէն, այլ բարոյական և մտաւորային զարգացման համար շինուած զիրքերէ պիտէ ծագի և այս լոյսն է Ազատութեան աղու ժպիտը, անոր քաղցր և անմահական նշմարը, . . .

Ընկերային բազմութիւն մը, ինչպէս ստէպ կրրկնած եմ։ յառաջանալուն համար զլիաւոր պայմանները ապագային համար կանխատեսութիւն ունենալու և պատմութենէն ալ, որ անցեալին ճշգրիտ հայելին է և նախնեաց վկայութիւնը, փորձ քաղել և ըստ այնմ վարուիլ։

— Ներէ, ըսաւ. Ջարմայր անվայել կերպով մը խօսքը կտրելով. ինչպէս կրնաս պատմութեան համար անցելույն ճշգրիտ հայելին է ըսել քանի որ շատ անգամ ճշմարտութեան տեղ մեծ ստուծիւններ կը պարունակէ։ Ասկէ զատ կաղաչեմ որ ըսես ինձ թէ ինչպէս կարելի է պատմութիւն մը մեր կողմանէ իբրև ստոյգ ընդունել համոզմամբ։

— Հնարին է որ պատմութիւնը երբեմն ստուծիւններ աւանդէ, եթէ անոր պատմագիրը անփոյթ ըլլալով սխալ տեղեկութիւններ կ'առնէ։ Բայց ինչպէս ես ալ ճշգրիտ չ'ըսեմ այն պատմութեան համար, որուն պատմագիրը իրեն առաջին պարտք դրած է իրողութիւնը ձեռք ձգելու համար ամեն ջանք ի գործ դնել ու եղելութիւն մը ուրիշ քանի հոգիէ որ զրուած ըլլայ, այդ զրուածները գտնել և եթէ իրարու կը համապատասխանեն այն եղելութիւնը իբրև ստոյգ արձանագրել և կամ պատմագրին բազմաթիւ վկայութիւններով հաստատածը ընդունել։ Հետեւաբար, ատոնք մակաբերելով սրտութիւնը դրժելու համար փորձառու և բեղմնաւոր միտք մը ու բարձր դատողութիւն ունենալու է։

Երկրորդ հարցմանդ պատասխանելով՝ պատմութեան մը ճշմարտութիւնը գործնական համոզմամբ ընդունելու համար ուրիշ միջոցներ կրնան բանեցընել։ Փիտեւ մատենագրութիւն մը իսպառ կը ջրնջուի, և այդ ալ ժողովուրդի մը կամ բռնապետի մը

կամբէն կախեալ է: Ուստի երկու բան կայ որ ժամանակը իսկ զժուարաւ կրնայ անհետ ընել: Առաջին անցեալէն մնացած շէնքերն են, որոնք թէպէտեւ յիշատակ և աւերակ, այսու ամենայնիւ նախնեաց ինչ վիճակի մէջ գտնուելին և իրենց հանճարը մինչև ուր թափանձած ըլլալուն կրնաս վերահասու ըլլալ: Զոր օրինակ Եգիպտական լեզուն կորսուած է, բայց հոնտեղ գտնուած հսկայաշէն բուրքերէն, Միմիսիս քաղքին աւերակներէն կը մակաբերես իսկոյն որ ատեն մը հոս արհեստից և ճարտարութեան մէջ յաջողակ ազգ մը կը բնակէր: Էնթադրենք նաև թէ մեր ազգը զլիսովին անհետ եղած ըլլար, և մեր ազգային լեզուն և պարամութիւններ չ'ըլլային, օտարազգի ուղեոր մը Հայաստան ճամբորդած ատեն այն հոյակապ պալատներու, ամենի և անառիկ բերդերու աւերակները միայն տեսնելով՝ կարծեմ չպիտի սխալեր եթէ ըսելու ըլլար թէ. — Այս ազգը միւս իրեն խել մը նմաններուն պէս իւր բռնաւորաց լուծին տակ ճնշուած: այլ պատերազմասէր ազգ մըն էր:

Երկրորդը ժողովուրդի մը յիշատակարանն է, որն որ զիտցածը սերունդէ սերունդ կ'աւանդէ: Շատ քիչ անգամ կը պատահի որ այսպէս աւանդուելէն ետքը մինչև մեզի ստուծեամբ, անթափանձելի գաղտնիքներով, սխալ դատողութիւններով խառն չ'հասնի: Վասնորոյ այս կերպը թէպէտեւ ըստ իսյարդի չ'է, բայց կարելի է որ մեզի երբեմն գէթ ճշմարտութեան նշոյլ մը հաղորդելով մեր հետաքրքրութիւնը յագեցնէ:

Աւանդուած պատմութիւն մ'ալ Հայաստան ճամբորդութեան ատենս Սիւնեաց աշխարհին Ագարակ աւանին մէջ վառվռուն և կորովի երիտասարդէ մը ականջովս լսեցի, զորնոր իւր հաւէն ուսած էր: Սակայն խիստ տարօրէն և առասպելախառն իսկ թուեցաւ ինձ և քանի որ շատ ժամանակ կայ դեռ ընծրելու եթէ կը հաճիք արդի ամբողջ յիշողութեամբս ձեզ մանրամասն կը ճառեմ:

Ասանկով Աշոտ բարեկամին միտքը զբաղեցնել կը բաղձար: Ուստի անոր կսկիծները մոռացման

մէջ ծաղկելու համար ինքնալ քիչ մը տրտմալի պատմութիւն մ'ընելու ստիպուած էր:

Զարմայր վերի բացատրութիւններով զոհացուցիչ համարելով՝ ինձի հետ ի միասին հաւանութիւն տուաւ և սկսանք ունկնդիր ըլլալ:

Շատուհակի

ԷՐԻՉԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Էրզնկա 18 Ապրիլ 1868.

Սիրելի Բարեկամ

Էրիզացի Հայր՝ իւր բազմամեայ հաշմութիւնը բուժելու փորձ մը և անտարբերութեան թմբիրը մերկանալու սիրայորդոր ջանք մը կրնէ: Ամուր կռիւներէ և տղայական տատանումներէ կարծես ձանձրացած՝ անիկա ալ կը յառաջադրէ շարժիլ. կենդանութեան նշան մը տալ և իրապէս մարտնչիլ մարդկային սեռի այն վաղեմի ոսոխին հետ որ կանուանի տգիտութիւն:

Բարեկամ, ներկայ տարոյս Էրզնկացւոյն Ազգասիրական շարժումները. յիրաւի ոսկեգօծ տառերով պատմութեանց էջերու մէջ նկարագրելու արժանի էն. շարժումը ուր որ, թէ և վտանգի մը մէջ ալ ըլլայ միշտ կենդանութեան նշան է. Էրզնկացւոյն կենդանի ոգոյն շարժութիւնը վարագուրող տրգիտութեան և նախանձու քողը. վերջին օրերուս մէջ, Ռուբինեանց և Վարդանանց ընկերութիւններու, սերտ սիրով և ազգասիրական ոգով, անբաժանելի միաբանութեամբ կտոր կտոր բզբտուեցաւ:

Ազնիւ Հայրենակիցս. Էրզնկաբնակ Հայր. քաջ համոզուեցաւ թէ անկենդան և անշարժ ազգերու տգիտութեան և թշուառութեան միակ պատճառներն են. սրտի փտութիւնը և մտքի մոռութիւնը. ահաւասիկ երկու սոսկական շղթաներ. զոր չարութեան ոգին կը տարբնէ և որոց պատճառաւ ինչպէս անհատը, նոյնպէս և մարդկային ընկերութիւնը հաշմուած կը մընայ. և վայրկեան մը իսկ չը

կրնար շարժիլ և քայլել լուսաւորութեան շաւղին . և յառաջադիմութեան ծաղկաւետ պարտիզին մէջ : Այս անհուն տիեզերքիս վրայ կենդանի ոգւով ապրիլ ուզող ազգաց առաջին պարտքն է քայլել . ուր դէպ ինոր աշխարհ . այս շարժական քայլը անհնարին է և ամուլ առանց մարմինի , մտքի և սրտի մը շակութեան : Ուսման սիրոյ և միաբանութեան տարածումը . միշտ սոցիալութեան ապառաժին դէմ պատերազմ հրատարակել է , և յաջողիլն ալ հաղթահարել է :

Էրզնկացին կամ լաւ ևս է ըսել Հայրենեաց անդրանիկ երեխան , ահա այսօր ակներև նշմարելով իւր Հայրենի տան թշուառութիւնը . վայրկեան մը՝ ալ ևս չուզեր նիրհել այն դարաւոր դժոխային թմրութեան մէջ . զոր ի ծննդէնէ մինչ ի ցայսօր զինքը դէպ ի յետադիմութեան ահռելի անկողնոյն մէջ թաւազլոր կը խորշոմէր : Սակայն այսօր փառք նախախնամութեան նա մանաւանդ տեղոյս Արժանապատիւ Բագուանեան Պետրոս վարդապետի Ազգասիրական և Հայրենասէր ոգւոյն , որ վերջապէս իւր բազմալորդոր ջանիւքը կարողացաւ ի նախատինա սոցիալութեան , համոզել հասարակութիւնը . և ի յօգուտ Հայրենեաց մարտ 17 կիւրակէ ցերեկին Ընդհանուր ժողով մը գումարել քաղաքիս Ս . Նշան Եկեղեցւոյն մէջ : Ինչ զմայլելի տեսարան , բազմաթիւ ազգայինք որ ետական ոգւով ժամանակէ մը ի վեր իրարմէ հեռի կը թափառէին . այսօր ձեռք ձեռքի տալով միաբանութեամբ զիրար կը զգուէն :

Սիրելի բարեկամ Էրզնկաբնակ ողջամիտ հասարակութիւնը տեսնելով որ Ազգային կենսատու գործերը բոլորովին տարօրինակ կերպարանք մը կ'առնէ , ինչուան Սահմանադրութեան հրահանգը կողմն գալու Ընդհանուր ժողովը արժան համարեց . Արժանապատիւ Պետրոս վարդապետ Բագուանեանի նախագահութեամբ 13 անձինքներէ բաղկացեալ առժամանակեայ ժողով մը կազմել իրեն օչնական քանի մը բանիբուն Ազգայիններէ որ , այսօր պատիւ կը համարիմք ազգօգուտ Հանդիսիդ միջոցաւ հրապարակաւ ծանուցանել :

Արժանապատիւ Պետրոս վարդապետ Բագուանեան , Նախագահ ժողովոյս .

Մ . Գրիգոր Աղա Քիւրտօղլուեան Ատենապետ .

Ղուկաս » Աշքեան , Ատենադպիր .

Շահնազար Էֆէնտի Բարունեան .

Գասպար Աղա Սիւրմէնեան .

Աւետիս » Դանելեան .

Ղազար » Մարութեան .

Համբար » Սատրիկեան .

Սեդրակ » Մանուկեան .

Համբար » Լսփեան .

Յարութիւն » Էհրամեան .

Յարութիւն » Թովմասեան .

Գալուստ » Պապիկեան .

Ուրեմն Ազնիւ խմբագիր ի սէր Հայրենեացդ բարեհաճեցէք ձանձրացուցիչ նամակս , Ըերդ Ազգօգուտ և Մերս Մայրենի երկրի անուներ կրող Հանդիսիդ միջոցաւ հրատարակել առ ի ազգարարութիւն համայն ազգայնոց նա մանաւանդ բնիկ Էրզնկացւոյն անշիջանելի սիրոյն ու միաբանութեանը համար :

Որով մնամ ձերդ անկեղծ բարեկամ և սիրելի Ազգիս ամենախոնարհ ծառայ :

ՍԻՄԵՕՆ Մ . ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Այս նամակը սիրով հրատարակելէ զկնի . նա և բարեմաղղութիւննիս կը յայտնեմք . Էրզնկաբնակ ազգայնոց նա մանաւանդ Արժանապատիւ Բագուանեան Պետրոս վարդապետին , որ Հայրենասիրական ոգւով , Հայրենեացս բարեխառութեան և ժողովրդեան անդորրութեան համար իւր նախագահութեամբը տասն և երեք պատուաւոր ազգայիններէ բաղկացեալ Ընդհանուր ժողովոյ օգնականառժամանակեայ ժողով մը կը կազմէ այն պայմանաւ որ , շաբաթը անգամ մը ամէն շաբաթ օրերպատկառելի նիստ մը գումարի և որպէս զի ազգային կենսատու խնդիրները երեսի վրայ չը մնան :

Աշխարհիս մէջ անձ մը՝ որչափ որ Հայրենասէր ըլլայ . կրկին անգամ իւր Հայրենիքը աւելի կը սիր-

բէ Էրիզան Թեպետև տասը աարիներէ ի վեր Հայ-
րենի հորիզոնէ հեռի օտար կլիմայի մը օդը կը
ծծէ . պակայն և այնպէս զիշեր և ցերեկ իւր Մայրե-
նի երկրին յառաջադիմութեանը . Հասարակութեան
անդորրութեանը և դպրոցներու դաստիարակու-
թեանը համար միշտ նախանձախնդիր է :

Էրզնկաբնակ Ազգայնոց այս բարենպատակ Ազ-
գասիրական ոգին . երբ Հանդիսիս միջոցաւ . Կ .
Պօլսոյ . Ազգային Վարչութիւնը կարդայ . քաջայոյս
եմբ որ այլ ևս չպիտի դանդաղի օր առաջ Սահմա-
նադրութեան կենսատու լոյսը Հայրենասիրական
ոգևով , գաւառաբնակ ազգայնոց վրայ սփռել :

— Էրզնկայէն մեր Արգոյ Թղթակիցն կիմացնէ մէկ
նաևս Թէ՛ Ուռեկլոդլեան Դաւիթ աղան Մեղուցիք
կոչուած զիւղի դպրոցին մէկ Թերթ Էրիզա շնորհե-
լով , ինչպէս որ Հայ գրականութիւնը . նոյնպէս ալ
յիշեալ զիւղի Հայկազն աշակերտները պատուել
բարեհաճեր է :

— Ինչպէս որ ամէն ընկերութիւն իւր Ազգին և
իւր իմացականութեանն ու դաստիարակութեանը օգ-
տին համար սիրով աշխատիլը պարտ մը սեպած է .
չեմք մոռնար ըսելու որ վերոյիշեալ զիւղի Ատու-
մեանց բարեկարգ ընկերութիւնն ալ առ ի քաջալե-
րութիւն Հայ գրականութեան արժան գատեր է ,
երկտող գրութեամբ Էրիզա Հանդիսի մը կարե-
ւորութիւն ունենալը մեր Արգոյ Թղթակցին իմացնել :

Այսօր ի խոր սրտէ շնորհակալութիւննիս յայտ-
նելէ յետոյ , քաջայոյս եմբ որ վերոյիշեալ դպրոցի ա-
շակերտները իւրեանց դաստիարակութեամբը . նա-
ևս Ատուլմեանց ընկերութեան . Մեծապատիւ ան-
դամներն ալ սիրով և միաբանութեամբ . Հայկազ-
եան աշխարհի անունը յաւիտեան անմահացնելու
ջանքերնին , չպիտի զլանան իրենց բարենպատակ
օգուտները Հայրենեաց դաշտին վրայ փառօք պսա-
կելու :

ՆՈՒՊ ՍԻՐՈՅ

Ո՛հ, Սիրունիս , զի բիբբդ ի վեր կամբառնաս
Վանդակապատ պատուհանէն դուրս ինկած ,
Արարչին սէրն զիտեմ քու սիրտդ է տիրած .
Յիշես արդեօք սիրոյդ հոգևովս իմ մեռած ,
Միշտ զքեզ յիշած :

Սիրուն ժպիտ , գեղ նազելի դու վարդ ես ,
Հոտովդ անոյշ քեզ քաղողիդ ոգի ես .
Զմայլարար սրտիս քաղցր նեկտար ես ,
Աշխոյժ ոգևոյս բորբոք սէր ու հրեշտակ ես .
Ո՛հ սիրեմ ըզքեզ :

Հորիզոնէն շողշողացող դժխոյն ես ,
Մայիս ամսուն ծագող մեղմ առաւօտն ես .
Գեղածփեալ վարսիւք պնծեալ շուշան ես ,
Ո՛հ իմ հոգևոյս շնչող քաղցրիկ Զեփիւռն ես .
Ո՛հ սիրեմ ըզքեզ :

Առաւօտուն փայլող պերճ Արուսեակն ես ,
Վեհ լեռներէն ծռչող հեզիկ հողմիկն ես ,
Լուռ անտառաց սիրող Յաւերժահարսն ես ,
Ո՛հ իմ սրտիս սիրոյ խանդն ու գորովն ես .
Ո՛հ սիրեմ ըզքեզ :

Բուրաստանաց անուշահոտ նարկիզն ես ,
Շնորհաց Դրախտին նշխար փափուկ վարդիկն ես .
Առջի սէրս ու առջի բարիս դու սէրս ես ,
Երկու աչացս երկու վճիտ բիբերս ես .
Ո՛հ սիրեմ ըզքեզ :

Անտառներուն ցօղով լցուած ծմակն ես ,
Ծաղկանց վրայ ի ջինջ փայլող շաղիկն ես .
Զգացումներս գգուող փափկիկ հրեշտակն ես .
Ա՛հ իմ սիրոյս անգին անդամանդիկն ես .
Ո՛հ սիրեմ զքեզ :

ՇԱԽԱՐՀ

Ի Մ Ա Հ

Մ Ա Ն Ե Ա Յ Օ Ր Ի Ո Ր Դ Ի Ո Ւ Մ Ե Տ Ե Ա Ն

Մ Ր Մ Ո Ւ Ն Ջ Ե Ղ Ե Ր Ա Կ Ա Ն

Ձի՞ թղփայորդ ամաք անցուցին կապոյտ գերկնիս զկամար
 Ձի՞ այս հեղեղք ջերմ արտասուաց գնան ընդ լանջս Հայկազնեայ
 Առ ի՞նչ նենգժոտ Պարկայցն հանգիստ դառն անիծիւք որոտայ
 Անագորոյն քերցս մկրատ զի՞նչ թանկագին խեաց լար :
 Գոժկանդ մահաշշուկ ի Հայունոյն ի բուրաստան զի՞ կայ քեզ
 Աւա՞ղ հայորերուն Մանեայ արև արար զիւր մուտ աղէկէզ
 Ա՛հ կոյսդ տարաբաղդիկ կուսանացն ի պար աստղիկ լուսալիր ,
 Հոյք գեղապար աստեղց ի վառ քեզ նագելոյդ կային յակճիռ
 Ամաք չ'իշխէին գթող տխրական պատել զղիմօքդ Աթինեան
 Ի Նշուղիցդ ի փայլ ի փայլ զմբաղք գնային ցան և ցիր :
 Զո՞ր դառնութեան ըմպանակ . արբոյց քեզ մահն վայրագ
 Շուշանդ մատաղատունկ ի հայրենիդ բուրաստան
 Աւա՞ղ դեռ ևս ոչ ատոք՝ զի՞ հնձեցար տարածամ :
 Ոչ ևս տեսցես գթո լերինս ծիծաղախտ և զղաշտ
 Զհարազատսդ զազգական գթո ընկերս սրտերաշտ
 Ի գուարթ երամ Հայ կուսանացն որ ևս իցես գոլ տիպար
 Ուսումնասէր քո բարոյիցդ ի շուրթդ թողեալ զպապակ
 Տիօք աղածրի սուրբ տարբանաց զրաւիս յանքիծ քո կենաց
 Հէզ հայրիկդ անմխիթար կոր ընդ բեռամբն վշտիդ
 Վիժակաճիգ աչացն աղբերք թացցէ զլարս կիթառիդ
 Մանեայն մատուռք հեզաթնթիկ ոչ ևս անդ թրթրակին
 Ձի Հայրերնին զականողիսն իրալօնիցն սրբեսցին :
 Ա՛հ երկին միթէ ընդ սուգ վճռեր զձայն անդստին
 Մինչև ցերք խեթիւ տեսցուք զքոյդ ահեղ զակնարկին
 Այո քա՛նիցս բաղդն անողոք զոյս գրոհիս թարշամէ
 Բա՛ւ է դահճին , զի՞ է զի ոչ իմրէժն պարտասէ :
 Կուսանք Հայոց նորատիք ընկերք Մանեայ սիրասունք
 Փունջս ծաղկանց յօրինեալ երթայք ի յայց նագելոյս
 Զուղխեմահոս ձեր յաչաց ցողեցէք զարուստ անմեղ
 Սփռէք զծաղկունսդ զշիրմաւ հարսնացելոյն առ Յիսուս :
 Թացէք թացէք զսեաւ հողոյդ տխրատեսիլ ցուրտ զանգուած
 Անմեղ մրմունջք ձեր սրտագին ընդ դամբանաւ թափ անցցեն
 Հոգի Մանեայ վաղ իսկ իսողեալ Առաքինեացն ի կաճառ
 Շնորհս կայցէ զձէնչ կուսանք , և հրճուեսցի խանդավառ :
 Եւ յերկրայինս առագաստէն վերասլացեալ յերկնայինն ,
 Եթող յաստիս զողբ և զվիշտ թռաւ երջանկագն ի դադար ,
 Մեռա՛ր դու կո՛յս , այլ քո անուն և պերճ ձրիցդ յիշատակ
 Անչինչ կացցէ սրտիցն ի խոր քոյինատենչ սիրելեացդ
 Եւ ես որ զարուստ և ջերմ մրմունչ կուսիդ ձօնեմ անվատակ
 Ընդ սիրոս որ զքէն յար գոչեսցին «Ա՛հ կոյս վաղամեռիկ ,
 Ես հեզ Մուգայս նոցին կցորդ երանեցից զքեզ Մաննիկ :

Անցեալ երեքշաբթի Ապրիլ 29 թիւ Մանգումէի էֆքեար Ազգօգուտ Օրագրոյն մէկ յաւելուածը կարդալով՝ ցաւ ի սրտի կիմանամք որ Պատրիարքարանի թախանձանօք . Բ . Դռնէն պաշտօնական հրամանագրով մը յիշեալ լրագիրը ինչուան երեք ամիս դադարման դատապարտուած է :

Սակայն չեմք գիտեր թէ՛ ինչ էր Փանոսեանի յանձանքը . և որոնք էին Փանոսեանի անիրաւ յարձակումները որ Պատրիարքարանը , առանց քննելու փնտռելու . և գոնէ զատ մը վարելու . իւր բնացը համեմատ . Բ . Դռուը հրաժարականներով բողոքներով կը ձանցրացունէ . որ վերջապէս կորոշուի առժամանակեայ կերպիւ 3 ամիս լուռութեան դատապարտել զՓանոսեան :

Թէպէտեւ մէք շատ և շատ տողեր և գիծեր ունէինք . արդարութեամբ այսպիսի խնդրոյ մը վրայ բազմապատկելու , սակայն այսօր էրիզայիս էջէրուն սղոմեանը պատճառաւ յետեւեալ թուոյն կը թողումք :

Փ Ո Ւ Ն Ձ

— Ճարտար և խորագէտ կանայք . օրիորդաց կուսութեան վրայ այնպիսի նկարագրութիւններ կրնեն . որպէս թէ օրիորդի մը փափկիկ սիրտը , անուշաբոյր ծաղկի մը նման ամէն օր թառամելով կը խորշոմի կրկին կենդանութիւն առնելով կը բացուի , ու իւր քաղուածքն ալ առաջինէն հարիւր անգամ աւելի ևս վշտալի է :

— Երջանիկ են այն օրիորդները որք Վեստեան կուսանաց նման , գիտեն իրենց ծաղկապսակ կեանքը դառն վիշտերէ հեռի պահել : — Սակայն աւելի ևս և քաղցրաբոյր հոտ մը բուրած պիտի ըլլայ այն օրիորդը , որ վարդի նման իւր բացուած օրէն , այսինքն զեռ ևս իւր տերեւները չը թափած մարգկային սեռը զմայլեցնելու համար կանուխ ժամուան մը մէջ կը քաղուի . — Երջանիկ կեանք մը վարած պիտի ըլլայ բնական աշխարհին մէջ այնպիսին . քան թէ իրենց կուսական տերեւներուն վրայ թառամեալ խորշոմող վարդին որ ոչինչ տեղը կը ծլի կը ծաղկի ու առանց աշխարհի վրայ անուշ հոտ մը բուրելու կ'անհետանայ . ան այսպիսին կենդանի մեռեալ մ'նէ , մահուան ախրալի սգազգեայ և ցուրտ դազալին մէջ կայուն :

— Կոյսութիւնը ողջամիտներու համար դաշնակ մի է . իսկ ապուշներու ոչնչութիւն մը :

— Օրիորդներու կոյսութիւնը . զեղեցիկ ծաղկի մը անուշահոտութիւնն է : — Ծաղիկ մը հոտոտած ստեննիս անոր համեմաւոր հիւթը չենք կրնար ծծել , և կրկին մեղու մը կամ թիթեռնիկ մը կրնայ իւր ծաղկեայ հոտաւոր բաժակին մէջ անուշ և քաղցրահամ մեղրի մը նիւթ մատակարարել :

— Օրիորդի մը սէրը կրնայ ընդհանրապէս Զեփիւռի մը մեղմ շունչը սփռել . քաղցրաբոյր ծաղկի մը նման առանց իւր կուսակոտն անուշահոտութիւնը վտանգի մը մէջ ձգելու :

— Ամէն ատեն սիրահարեալի մը , սրտատոչոր հառաչանքները անկեղծ սիրոյ մը զուգականութիւնը կապացուցանեն խորհրդաւոր և զաղանի մտերմութեամբ կուսական քաղցրիկ յիշատակը մարդկային սրտի մէջ անչնչելի կը մնայ . վասն զի ինքն է միայն ճշմարիտ սիրոյ մը քաղցրիկ Զեփիւռը . — Ինչպէս որ ծաղկի մը առանց հոտ մը բուրելու անարգելի է . նոյնպէս ալ օրիորդ մը առանց սիրոյ կենդանի դիակ մի է . և ընկերական աշխարհի առաջ ալ անտանելի :

— Օրիորդ մը առանց սիրոյ չապրիր , և սէրն ալ առանց կուսութեան , աղօտ ճրագի մը նման խկոյն կը խաւարի :

Համագան Հեղինակներ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ն Ե Ռ Ն

Կ Ա Մ

Կ Ա Տ Ա Ր Ա Ծ Ա Շ Ե Ա Ր Հ Ի

Ի Մ. Յ. ՀԻՍԱՐԵԱՆԷ

Այս վերնագրով Արամեան մաքուր տպագրութեամբ ի լոյս ընծայեալ սքանչելի հեղինակութիւն մ'է , և որուն պատմական նկարագրութիւնները հետաքրքրական ըլլալուն , քաջայոյս եմք որ Ազգայինք ալ յիշեալ Արգոյ հեղինակին այս աշխատասիրութիւնն փառօք պսակելով , ուրիշ այլ և այլ հեղինակութիւններ և թարգմանութիւններ ևս Հայ գրականական ցանկին մէջ բազմացնելու պատճառ պիտի ըլլան :

Կը ծախուի միայն ի գրատան Փարիզու Շէրիֆ Փաշա խան Թիւ 13 . Գին 6 Ֆրանք :

Խոնքալիր-Տնօրէն

Խ Ա Ձ Ի Կ Թ . Թ Է Ր Ձ Ե Ա Ն

Աւսիկեռ աւթ . բօժոկական դպրոցի

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ա Ր Ա Մ Ե Ա Ն

Կ . պօլիս , Ուզուն Զարեք Շէրիֆ փաշա խան , քիւ 13